

Այն օրը

Ես մշտապես ապրում եմ այս մտքով, այսօր՝ այն օրն է: Իսկ օրը շարունակ այն չէ, թեպետ երբեմն թվում է՝ համարյա այն է:

Այսօր էս գրելու եմ ինչպես հարկն է, այսօր ինձ պետք չէ մտածել, ինչպես գրել, այսօր այն կգա, ես ես ինքս ինձ ոչնչում չեմ կշտամբի այդ մեծ օրը, հոգով մաքուրների օրը՝ իմ օրը:

Եվ մեկ էլ ողջ կյանքում կամեցել եմ իմանալ ո՞վ է հնարում ծիծաղելին:

Կարծես այդ ոչ մեկին հայտնի չէ: Վերցրեք յուրաքանչյուր կատակ, չէ՞՞ ախր մեկը ասել է այն առաջին անգամ, բայց փորձեք գտնել հեղինակին:

Եվ մի բան էլ, միանգամայն այլ պլանում, մշտապես գրավում է ինձ՝ դա խոհերն են որոշ գրողների՝ իմ հինավուրց ընկերների եւ հինավուրց թշնամիների մասին:

Այդպիսի մի գրողի ես գիտեմ երեսուն երեք տարի, նա հիանալի ընթերցող է, ես կասեյի, առավել ընթերցող, քան գրող: Երեսուն տարվա ընթացքում նա ոչինչ չի գրել, սակայն իրեն այնպես

է պահում, ասես շարունակում է ստեղծագործել: Նա համարում է, որ այս բոլոր տարիներին հանձարեղ երկեր է արարել: Հերիք է, որ այդ գրողը մի գիրք կարդա, ապա նետվում է դեպի իր մեքենան, եւ սավառնում է տաս մղոն անդին այլ մի գրողի մոտ, լոկ այն բանի համար, որպեսզի հաղորդի:

- Ես պարզապես Ուիլյամ Ֆոլքներ չեմ կարողանում կարդալ, այդ մարդը գրել չգիտե, նա նույնիսկ ուղղումներ չի անում, թխում է ու թխում առանց կետադրական նշանների, բայց ես այնուհանդերձ ստիպեցի ինձ ընթերցել նրա նոր գիրքը՝ այն անկարելի է կարդալ, պարզապես անհնար է:

- Իսկ ինչու՞ կարդացիր:

- Միայն թե մտածիր, գրքի անունը դնել «Սրբավայր»: Կարծես լսում ես «Փարիզյան Աստվածամոր տաճարի» այն կազին, բայց, իմ կարծիքով այստեղ ոչ մի սրբավայրի հոտ չի գալիս:

Եվ մեկ էլ մի քանի տարի առաջ, իմանալով, որ մի գրող փողը խոթել է բերանը եւ ինքնասպան եղել, նա չավարեց չորս հարյուր մղոն կտրել, որպեսզի հարցնի:

- Ինչպե՞ս կարող էր դա պատահել:

- Չգիտեմ:

- Եվ ինչու՞ նա այդ արեց:

- Չգիտեմ:

Իսկ օրերս մտաբերեցի եւս մի գրողի: Սա ոչ գրել գիտեր, ոչ կարդալ, իսկ ինչ գիտեր անել, անում էր անընդմեջ ողջ ութ տարի, հետո սրտում ինչ որ զապանակ կտրվեց, եւ նրա կինը այրի դարձավ, իսկ երկու զավակները՝ որբեր: Իսկ նա ահա թե ինչ էր անում կինոսցենարներ էր հեղինակում, ընդ որում լրջորեն, ինչը, երևի թե նրա հաջողության պատճառն էր, քանզի մարդիկ, ովքեր ֆիլմեր են անում, իրենց գործին լրջորեն են վերաբերվում: Այն, բոլորը, գրողը տանի, ինչ անում են, դրան լուրջ են վերաբերվում, ահա

մեն միայն ես՝ ոչ:

Վերցնենք, օրինակ, թատրոնը, ներկայացում է, դերասաններն աշխատում են, նրանց բազմիցս կանչում են, հանդիսատեսն իր ավերն է դադում՝ ես ոչ մի կերպ չեմ կարողանում դրան լուրջ վերաբերվել, ես խղճում եմ դրամատուրգին, ով հաղթանակ է տոնում, խղճում եմ դերասանների, ովքեր արբենում են ծափահարություններից այնքան, որ այքերիցս արցունք է կաթում, չէ՞ այս ամենը պարզապես կատակերգություն է, չնայած ես ոչ մեկին չեմ հանդիպել, ով կարողանար հաղորդել կատարվածի ողջ զավեշտականությունը:

Մարդիկ ամեն ինչ լուրջ են ընդունում: Ստեք վարսահարդարի մոտ մազերը սարքելու երկրորդ անգամ, եւ նա կկարծի, թե դուք գերապատվությունը տալիս եք հատկապես նրան, նրա հիասքանչ վարպետությանը, կսկսի հպարտանալ, թե ինքը իսկական վարսավիր է, չէ թե այն գինեմուկները, ովքեր մազերի ամրապնդման համար հեղուկ են կլլում եւ տաս տարուց ավելի աշխատանքի չեն կարողանում

Է լուրջ վերաբերվել: Կարելի գորիլային սովորեցնել կտրել կրկնակի արագ եւ լավ, սակայն այդ վարսավիրը հավանաբար կասի՝ «Նրան հիպնոսացրել են: Ահա կզարթնի, եւ կտեսնեք, որ բանի պետք չէ»:

Այն առավոտ, անկողնուց ելնելով, ես հանկարծ գոչեցի. «Այսօր այն օրն է»:

Ես սկսեցի սափրվել, չնայած ինձ համար միեւնույն էր, թե ինչ տեսք ունեմ: Դե, ասենք նման եմ ցուփ ծերուկի, ով առավոտից ցցվում է գարեջրասարահի առաջ, հետո ի՞նչ: Թքած ամենի վրա, եթե ես գիտեմ ճշմարտությունը. ես երիտասարդ եմ, գեղեցիկ, ես գրող եմ, եւ սա՛ իմ օրն է: Ռեալիտով Չաբբի Չեքերն էր երգում եւ ես սկսեցի ձայնակցել նրան. «Դե, մայրիկ, տուր մանչուկին քրեքեր»: (գողման ապարատ)

Կեցած եմ ցնցուղի տակ. Եվ ով ասաց, թե հիսունհինգը դա շատ է: Միայն թե ոչ ես: Ահա կխամեմ սեւ սուրճս, թունդ գլանակ կծխեմ, եւ այդ ժամ կտեսնենք:

Գրել: Ինձ միշտ թվացել է. եթե ինձ վրա իջանի մեծ պայծառացումը եւ կարող եմ ավետարան գրել, եւ ամեն անգամ մեծ պայծառացումը վերածվում է տասնյակ բաների, որոնք կարծես այդքան էլ վատը չեն, բայց այնուհանդերձ ոչ սուրբ գիրք: Խմիր սուրճ, մեկ, խմիր սուրճ, երկու, խմիր սուրճ, երեք,

- աշխարհք, առավոտը, կյանքը, ես, ախ ինչ լավ է:

Առաջին գավաթն ըմպված է, «Չեաթերֆիդի» նոր տուփը բացված է, ծխախոտը հանված է, լուցկին վառած, հուրը՝ ծխախոտի ծայրին, խորը ներքաշում, ավելի խորը. «Աստված, ախր այսօր՝ այն օրն է»:

Գաղափարներ: Ինչքան ուզես: Կերպարներ: Դեռ երբեք ոչ մի գրող չի ունեցել այսպիսի հրաշալի կերպարներ: Եվ ինչոր տեղ հեռու-հեռու խորքում ծխախոտի ծուխը խտուտ է տալիս քնատ շների ռունգերը, նրանք ուրախությունից թռչկոտում են, վազում են հետքերով, հաչոցներից շնչահեղձ, քանգի, ահա այն, խորամանկ շեկ աղվեսի հոտը, եւ այսօր մենք նրան կբռնենք, - շները, աղվեսները, ներշնչանքը, արվեստը, - ամենը մերը կլինի: Հիմա մեզ ոչինչ չի կանգնեցնի, եւ ամենայն ինչ միանգամայն նոր կլինի եւ դեռ փող էլ կստանաս: Աշխարհում չի գտնվի մի խմբագիր, ով համարձակվի այս մերժել, ասելով (ինչպես նա մշտապես ասում է, ինքն իրեն լուրջ ընդունելով)՝ սկիզբը լավն է, միջնամասից ավելի թույլ, իսկ վերջում մեզ պարզ դարձավ, որ մենք կարող ենք այս գործի պատճառով տապալվել:

Նա ամենեւին այլ բան կասի. «Օքէյ, միայն թե խելքի մոտ զին առաջարկէք: Շաբաթը երկու անգամ մեզ երեք միլիոն դոլարի հայց են ներկայացնում, որը մեզ բավական անձեռնտու է:

Ի դեպ, սա բառիս բուն իմաստով պատմվածք չէ, այլ, ճիշտն ասած, մենք շատ ենք ուզում տպագրել ձեր գործը, չնայած մենք չգիտենք, ինչո՞վ է նա այդպես մեզ դուր եկել, այգու, խնդրում ենք, չափազանց մեծ զին մի պահանջէք»:

Ողջ առավոտ, ամբողջ քառասուն չորս րոպե, ես զգում էի, որ սա իմ օրն է: Եվ դա ոչ միայն օր էր, որին ես ողջ կյանքս սպասել էի՝ այդպիսի օրվա ամեն յոթ սպասում է: Ես ինձ ընտրյալ էի զգում, մարդ, ում վերջապես այցելեց այդ օրը: Ես այնպիսի մի ընտրյալ էի, որ հազիվ էի ինքս ինձ տանում, իմ կասկածներով, անհավատությամբ, մոայլությամբ, ընկճվածությամբ, անտարբերությամբ, հոգնությամբ, այդ իր հավերժական՝ «Ամեն ինչ կկարգավորվի»:

Ես կամենում էի վեհանձն լինել նույնիսկ ինքս իմ՝ այս ծույլ ճարպակալած էակի նկատմամբ, մեծահոգի լինել նրա հանդեպ, որքան որ հնարավոր է, չնեղանալ նրա վիրավորանքներից, հաշվի առնելով նրա ընտրյալությունը, առաջ եւ այժմ, ես կամենում էի ցույց տալ, որ դույզն իսկ չեմ քամահրում նրան այդ բանի համար եւ նույնիսկ պատրաստ եմ առաջարկել. «Գիտե՛ս, արի՛ միասին»: Առատաձեռնություն՝ անսկիզբ եւ անվերջ, բարյացակամության ծովի չափ, եւ քրիստոնեական գթասրտություն՝ թեւատարած:

Տ՛ես՝ առավոտ է, եւ աշխարհը նորեն կենդանացել է: Ինչ-որ տեղ արեւածաղիկ է ծաղկում, մեղուն բանիմաց բզգում է դեղին ոսկե միջուկի գլխին՝ պատված դեղին թերթիկներով, որոնք ժպտում են արեւին՝ մեղուն գույնի եւ բույրի առատությունից արբել է: Դե՛ ինչ, ծերուկ, ամեն ինչ վերադարձավ, ասես չվացուցակով, ամեն ինչ, ինչպես առաջ:

Այ՛ քեզ օր կլինի այսօր: Ինչպիսի կատակներ, ինչպիսի հատվածներ, ինչպիսի կերպարներ, ինչպիսի հումոր, ինչպիսի վարպետություն, ինչպիսի ծիծաղ, ինչպիսի տեքստ, ինչ հեշտ է ընթերցվում, եւ ինչպես այն կընդունեն, եւ ինչ պահանջկոտ եւ հարցախույզ ընթերցողների կվերածի այն, այս անտարբեր ու թմրած անպետք գրքուկների սպառողներին:

Թողէք ինձ միայն հասնել իմ հավատարիմ սեղանին եւ իմ թանկագին գրամեքենային: Ինչ ասես որ չեմ արարի հիսուն հինգին հասած, այն դեպքում, որ 1939-ից լավ կաղում եմ, ինչի մասին վերջերս դադարեցի մտածել, բրոնխիտ ունեմ, որը չեմ բուժում, աջ ականջս խլանում է, թեպետ «Դե՛, մայրիկ, տուր մանչուկի քրեքերը» լսում եմ, աջ աչքս վատ է տեսնում, բայց ձախի հետ մեկտեղ դեռ կաշիսատի, դուք միայն թույլ տվեք վրա հասնել ճերմակ թղթին,- եւ կտեսնեք, թե ինչպես վեց կամ յոթ էջ կլցվեն ամեն զարմանահրաշ բառերով:

Սյուժե՞ն: Ու՞մ է պետք սյուժեն: Կառուցաձեւը, կոմպոզիցիան, ոճը: Ախր ու՞մ են պետք դրանք: Բարեկամս, երբ կյանքը իմաստալից է դառնում, հաջորդ օրը պետք է լինի հենց այն օրը, իսկ այն հենց հաջորդ օրն էր, օրը, որին միշտ ինչ-որ բան խանգարում էր գալ, հիսուն տարի նրան խանգարում էին գալ անձրեւը, գրիպը, դպրոցը, աշխատանքը, պատերազմը, կինոն, իրադարձությունները, մեծ իրադարձությունները, փոքր իրադարձությունները, բայց այսօր նա վերջապես եկավ, ահա նա այստեղ է, հենց ժամանակին, ինչպես սահմանված է, եւ նրան այլևս չի խանգարի գալ, այժմ, այս պահին, ակնթարթորեն, ինչպես

սուրճն է լուծվում իմ չորրորդ գավաթում, նա եկել է պետք է հավերժորեն շարունակվի, եւ այդ ամենն ինձ համար, անմեղ մանկան, ոչ մասնագետ մասնագետի, միակ համակարգի անհամակարգ հիմնադրի, ամենայն ժանրերի պսակագերծողի պատմվածքի, վեպի, խոհագրության, դատական ակնարկի, կատակի, երջանիկ 100 դուլար թոշակով ծերության մասին անվճար բրոշյուրի, գնացուցակի, կատալոգի, հասցեների գրքի, հեռախոսահամարների տեղեկատուի:

Սուրճ խմել չի կարելի, քանզի դրանից խոց է լինում, ծխել չի կարելի, քանզի դրանից կարող է քաղցկեղ առաջանալ, մարդկանց սիրել չի կարելի, քանզի մարդիկ քամահրանքի արժանի են, ուրախանալ, որ ապրում ես այս աշխարհում, չի կարելի, քանզի կյանքն անիմաստ է, նաեւ արագահոս Հավատալ ոչ մի բանի չի կարելի, քանզի ամեն ինչ արդեն հերքված է:

Նոր բացվող օրվանից ուրախություն սպասել չի կարելի, քանզի ոչ ոք դեռ չի տեսել այն: Մոռանալ կաղալու, բրոնխիտի, խլացող ականջի եւ կուրացող աչքի մասին չի կարելի, քանզի նրանք այստեղ են, քեզ հետ, քմծիծաղում են եւ սպասելով սպասում են, թե ինչպես քեզ փլատակի վերածեն:

Ուրախ եւ ծիծաղելի բաների մասին խորհել, դրանցից ծնված կանանց եւ երեխաներին հիշել, չի կարելի, քանզի ու՞ր է այդ ամենը հիմա, ու՞ր են նրանք բոլորը: Ոչինչ չի կարելի, քանզի ամեն ինչ մշտապես վատ է,- սակայն ոչ գրողի համար, նա երբեք չի հավատա, նրան չես համոզի, նա իրենք կպնդի. «Այսօր՝ այն օրն է», - ոչինչ եւ ոչ մեկին լուրջ չընդունելով, բացի այդ օրից, մաքուր, ինչպես չգրված թղթի էջը:

Այսպիսով, տասներկու ժամ առաջ նա նստեց սեղանի մոտ, եւ նստեցի սեղանի մոտ, ինչ որ մեկը նստեց սեղանի մոտ՝ առավոտյան վեցն է Սան Ֆրանցիսկոն դեռեւս խավարի գրկում է, ռադիոյով հնչում է «Դե՛, մայրիկ, տուր մանչուկին քրեքերը». եւ ով է արդյոք հնարում այդ երգերը, եւ ո՞րտեղ են այդ տղաները սովորել այդպես երգել:

Այսօր այն օրն էր, եւ նստեցի սեղանի շուրջ հենց նրա համար, որ ամեն ինչ ունայն է, անհույս եւ անօգուտ, եւ գիտելի այդ, ինչպես այն ֆինը ցատկահարդակի գլխին՝ նրան հեռատեսիլով ցուցադրեցին IX ձմեռային օլիմպիադայում Ինսբրուկում՝ կենտրոնացած, գլխահակ, այնպես, որ մեկնաբանը նույնիսկ կնոջը դահուկների էքսչեմպիոնին ասաց. «Նա ի՞նչ է աղոթում է»: Ինչպես ֆինը, եւ գիտելի, որ թող այդ սխալ լինի, թող որ հիմարություն է, նույնիսկ ծիծաղելի, բայց պետք է հետամուտ լինել, հասնել այն խելահեղ ծաղրող շիկամորթ աղվեսին եւ այդժամ, եւ տեսա, գլուխը բարձրացրեց, առաջ նետվեց ու սլացավ: Ահա նա հարթակից պոկվեց, երկտակվեց, համարյա դահուկներին գուգահեռ, եւ սուրաց այնտեղ, վար, աշխարհի լավագույն թռիչքին ընդառաջ: Եվ եւ գիտելի, ինչպես եւ նա, որ եթե դա ընդհանրապես հնարավոր է, հիմա հենց վարձելու ժամանակն է, եւ եթե եւ վիզու կոտրեմ, նույնպես լավ կլինի, քանզի նույնիսկ այդ հնարավոր չէ անել, մինչեւ որ չվարձես, մինչեւ որ չհայտնվես այնտեղ, այդ գրողի տարած կապույտ խիզախման գրկում:

Հենց եւ վեր կացա, եւ սկսեցի հեռվից հաշվել ժամանակը: Հենց միլիոնից, մոտ եւ մոտ՝ ութ, յոթ, վեց, հինգ, չորս, երեք, երկու, մեկ ելընթաց: Եվ ի՞նչ:

Ոչինչ: Նորեն փորձեմ: Երեք, երկու, մեկ՝ ելընթաց:

Նորեն ոչինչ, գուցե ավելի լավ է սկզբից սկսել, միլիոնից՝ ինչքան որ դուլար, ըստ

փառասեր ամերիկացի մանչուկների պետք է վաստակել, պրեզիդենտ դառնալուց մեկ կամ երկու տարի առաջ: Որպեսզի հաշվեմ միլիոնից, պահանջվեց համարյա թե մի ժամ, նույնիսկ այն դեպքում, որ ես շատ հաճախ թռչում անցնում էի եւ նորեն՝ ոչինչ, ոնց որ թե, ժամն էր արդեն պարզելու, թե այնուհանդերձ ում մեղքն է: Դրա վրա ընդամենը վաթսուն վեց տասնորդական վայրկյան ծախսվեց՝ մեղքն իմն էր: Ես սխալ էի գործել, ընտրելով հիմար մասնագիտություն, որին չի կարելի լուրջ վերաբերվել, հարկ էր օգտակար մասնագիտություն ընտրել: Գրող լինելն անխոհեմ է, առողջության համար վատ է, ինչպես ծխելը՝ կարճացնում է կյանքը:

Իսկ ի՞նչ պատահեց իմ օրվա հետ: Ու՞ր կորավ իմ սրամտությունը: Իսկ այն գրողների հետ, որոնց մասին ես երբեք չեմ մոռանում: Ամեն ինչ անցավ, ինչպես Ֆերլին Հասքին է երգում:

Անցավ, դե՛ անցավ, շարունակենք ապրել: Կգա երբեւէ եւ մի այլ օր: Ես ելա սեղանի մոտից, այդպես էլ թողնելով նրա վրա գրամեքենաս եւ ձերմակ թղթի խուրձը, եւ ուղեւորվեցի ծով: Ես մոտեցա ափին, այնտեղ ոչ մի շունչ հոգի, նույնիսկ կարթով ճապոնացի: Ես քայլում էի, նայում, լսում, քարեր եւ ճյուղեր էի ժողվում: Եվ ոչինչ: Փափուկ ավազի վրայով քայլելը դժվար է եւ ես սկսեցի կաղալ, ականջումս աղմուկ սկսվեց, հիվանդ աչքս մշուշվեց, շուրջս ճայերն էին պտտվում, եւ վար ու վար գալով, ասես սպասում էին, որ ես իրենց ինչ որ բան կնետեմ, կամ թե, ասես ես իրոք ճակատագրի ընտրյալն էի, եւ նրանք որպես ծես գլխիս շուրջ պսակ էին հյուսում:

Ողջ օրը ես պարապ դեգերում էի, բերանումս ծխախոտի դառնահամը, մազակալվել էի բիթլզներից յուրաքանչյուրից ոչ պակաս, մեռյալների մասին հուշերի մեջ խորասուզված, իսկ իմ հուշերում ուսերը, առավել հեռու եւ հեռու, 1934, 1932, 1928, մինչեւ ռումբը, մինչեւ պատերազմը, երբ գիտեին զվարճանալ, երբ մահ չկար, երբ մեռածները դեռ չէին մեռել եւ դու գնում էիր մեկի թաղմանը, մտածելով. «Իսկ դա, երեւի հետաքրքրական է»: Այնուհետեւ, երբ արելը սկսեց սուզվել ծովը, եւ վերադարձա իմ ծխախոտներին ու սուրճին, իմ սեղանին, գրամեքենային եւ մաքուր թղթի խրձին, գրողը տանի, այսօր այն օրն էր, բայց այն այդպես էլ չկայացավ: Ես դա հաստատ գիտեի, եւ որ մի արդարացում չունեի, մեղավորը լոկ ես եմ եւ ոչ այլ ոք. եւ ահա այն կողքովս անցավ, հենց այն օրը նորեն կողքանց թռավ:

Թեեւ, ինչ արած: Ես երգել չգիտեմ, այն ինչ աշխարհում ամենից շատ կկամենայի:

Երգերը չեն հաջողվում, եւ ես նույնիսկ դադարել եմ դրանք ձայնագրել, որ ի՞նչ: Ես չեմ կարողանում կարդալ, քանզի ես գրող եմ:

Գրական աշխատանքն իմ մասնագիտությունն է, սակայն գրել էլ ես չգիտեմ: Ես ուզում եմ ասել, որ ես գիտեմ գրել եւ չգիտեմ, հասկանու՞մ եք: Գրել կարող է ամեն ոք, եւ ամենքը գրում են, բայց այսքան տարիներ աշխարհիս երեսին ապրելուց հետո, ես չգիտեմ, ինչպես գրել: Այսինքն գիտեմ եւ չգիտեմ: Ահա եւ ես մտածեցի, գուցե, արժե այդ մասին պատմել: Ամեն ինչ հրաշալի է, եւ ոչ այն պատճառով, որ վաղն ավելի լավ կլինի, քան այսօր, ամենեւին ոչ այդ պատճառով, ըստ էության, դա սխալ է, վաղը պարզապես չի լինում, վաղը՝ հենց այն օրն է, բայց հիսուն հինգ տարի այդպիսի օրերից հետո, ես հավատացնում եմ, որ ամեն ինչ հրաշալի է մեն միայն այն պատճառով, որ երեկը միշտ մեզ հետ է, դեռեւս չբացահայտված, մինչեւ վերջ չհասկացված, սակայն այն հիասքանչ չէր, արի խոսենք, հիշում ես, ինչպես անցած ամառ.

«Դե, մայրիկ, տուր մանչուկին քրեքերը»:

Թարգմանեց՝ Վարդան Ֆերեշեթյանը